



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ**

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.7/8299-2025

**ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ԴԱՎԻԹ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ**

Հարգելի՛ պարոն Առաքելյան,

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Պետական կենսաթոշակների մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Խ-1009-13.02.2025-ԱՍ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունները,

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2025 թվականի մարտի 13-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 204- Ա որոշումը:

Հարգանքով՝

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«ՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ
ՆԱԽԱԳԾԻ (Խ-1009-13.02.2025-ԱՍ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

«Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծով (այսուհետ՝ նախագիծ) առաջարկվում է 2026 թվականի հունվարի 1-ից սահմանել ստորին շեմեր՝ նվազագույն կենսաթոշակի և միջին աշխատանքային կենսաթոշակի չափի համար, այն է՝ պարենային զամբյուղի և սպառողական զամբյուղի ամսական արժեքները:

Նախագծով Կառավարությանը լիազորություն է տրվում սահմանել միջին աշխատանքային կենսաթոշակի չափը հաշվարկելու կարգը:

Նախագծին կից ներկայացված հիմնավորման մեջ նշվում է, որ նախագծի նպատակը կենսաթոշակային ապահովության բնագավառում վարվող քաղաքականությունն ավելի կանխատեսելի դարձնելու միջոցով տարեց, հաշմանդամություն ունեցող և կերակրողին կորցրած անձանց համեմատաբար բարեկեցիկ կյանք ապահովելն է:

Այս կապակցությամբ հարկ է նշել, որ անձի սոցիալական ապահովության իրավունքն ամրագրված է ՀՀ Սահմանադրության 83-րդ հոդվածում, համաձայն որի՝ յուրաքանչյուր ոք, օրենքին համապատասխան, ունի մայրության, բազմազավակության, հիվանդության, հաշմանդամության, աշխատավայրում դժբախտ պատահարների, խնամքի կարիք ունենալու, կերակրողին կորցնելու, ծերության, գործազրկության, աշխատանքը կորցնելու և այլ դեպքերում սոցիալական ապահովության իրավունք:

Հարկ ենք համարում նշել, որ կենսաթոշակի չափի և սպառողական ու պարենային զամբյուղների արժեքների միջև փոխկապվածության և համաչափության ապահովումը ՀՀ կառավարության կողմից իրականացվող քաղաքականության առաջնային ուղղություններից մեկն է, որը բխում է ՀՀ Սահմանադրությամբ վերջինիս տրված լիազորությունների շրջանակից:

Այսպես, ՀՀ ԱԺ որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թթ. ծրագրով աշխատանքի և սոցիալական պաշտպանության բնագավառում (4.6 բաժին) կառավարությունը սահմանել է ռազմավարական նպատակ՝ մինչև 2026 թվականը քայլեր ձեռնարկել նվազագույն կենսաթոշակի և կենսաթոշակի միջին չափերը

հավասարեցնելու, համապատասխանաբար՝ պարենային և սպառողական զամբյուղների արժեքներին:

Քննարկվող հարցի համատեքստում հատկանշական է նաև, որ Սահմանադրության 3-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված սկզբունքը փոխկապակցված է Սահմանադրության 3-րդ գլխում սահմանված օրենսդրական երաշխիքների և պետության քաղաքականության հիմնական նպատակների հետ: Պետությունն ունի սկզբունքորեն լայն հայեցողություն քաղաքականություն մշակելու և այն իրականացնելու հարցերում, ի թիվս այլնի՝ հիմնվելով տնտեսական և ֆինանսական ընթացիկ հնարավորությունների վրա՝ մինչև ժամանակ այդ սահմաններում գործադրելով Սահմանադրությամբ կանխորոշված հնարավոր ջանքերը՝ սոցիալական ապահովության մակարդակը հետևողականորեն բարելավելու ուղղությամբ:

Այս ոլորտում հանրային իշխանության մարմինների գործունեության սահմանադրականության գնահատումը ենթադրում է պետության նման հայեցողության և նրա սոցիալ-տնտեսական հնարավորությունների հաշվառման անհրաժեշտություն:

Այս առումով հարկ է նկատի ունենալ նաև Սահմանադրական դատարանի 02.04.2014թ. թիվ ՍԴՈ-1142 որոշմամբ Սահմանադրական դատարանի արտահայտած դիրքորոշումը, որի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեջ «կենսաթոշակ» հասկացությունը որևէ ձևով ամրագրված չէ: Սակայն «սոցիալական» եզրույթը դիտարկվում է որպես պետության սոցիալական բնույթի բնութագրիչ, սոցիալական ապահովության իրավունքի բնութագրիչ, պետության հիմնական խնդիրների սահմանները բնորոշող ոլորտ, կառավարության կողմից իրականացվող քաղաքականության բնագավառ: Բոլոր դեպքերում էականն այն է, որ իրեն նաև սոցիալական հռչակած պետությունը սահմանադրորեն որդեգրում է մարդկանց սոցիալական կյանքին առնչվող խնդիրների նկատմամբ հստակ դիրքորոշումներ: Դրանց թվում՝ սոցիալական ապահովության իրավունքը ճանաչվել է որպես Հայաստանի Հանրապետության քաղաքացիների հիմնական իրավունքներից մեկը և Սահմանադրության 3-րդ հոդվածի ուժով պետությունը սահմանափակված է նաև այս իրավունքով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք:

Վկայակոչված որոշմամբ Սահմանադրական դատարանն ընդգծել է, որ սոցիալական ապահովության իրավունքի երաշխավորման, ապահովման ու պաշտպանության հիմնական առանձնահատկություններից մեկն այն է, որ սոցիալական քաղաքականության ոլորտում, համաչափության և համամասնականության հիմնարար սկզբունքների պահանջներից ելնելով՝ հայեցողության սահմանները պայմանավորվում են, մի կողմից, պետության սոցիալ-

տնտեսական հնարավորություններով, մյուս կողմից՝ սոցիալական պետության սահմանադրական բնույթի պահանջներով:

Այս համատեքստում հարկ է նկատի ունենալ, որ պետությունն ունի սկզբունքորեն լայն հայեցողություն՝ քաղաքականություն մշակելու և այն իրականացնելու հարցերում, ի թիվս այլնի՝ հիմնվելով տնտեսական և ֆինանսական ընթացիկ հնարավորությունների վրա: Այսինքն, պետության հայեցողության սահմանները պետք է դիտարկել նրա սոցիալ-տնտեսական հնարավորությունների տեսանկյունից:

Այս առումով օրենքում վերոնշյալ ամրագրումը կատարելու առաջարկը քննարկելիս հարկ է նկատի ունենալ, որ զամբյուղները ձևավորվում են բազմաթիվ գործոնների ազդեցությամբ, այդ թվում՝ կախված նաև երկրի սոցիալ-տնտեսական վիճակից: Հետևաբար՝ օրենքում նման դրույթի ամրագրումը բյուջեների կատարման տեսանկյունից ռիսկային է: Այդուհանդերձ, Կառավարությունը յուրաքանչյուր տարի դիտարկում է կենսաթոշակների բարձրացման հարցը՝ հարկաբյուջետային հնարավորություններից ելնելով:

Բացի դրանից, Կառավարության հնգամյա ծրագիրը քաղաքական փաստաթուղթ է և իր մեջ ներառում է գործադիր մարմնի ստանձնած ոլորտային հանձնառություններ, որոնք իրականացնելու է իր կառավարման շրջանում: Այդ հանձնառությունները մասնակի և ընտրողական մոտեցմամբ օրենքում ամրագրելն առնվազն պիտի հիմնավորված լինի: Տվյալ դեպքում քննարկվող հանձնառության հիմքում պետության սոցիալ-տնտեսական իրավիճակն է և նպատակահարմար չէ օրենքով սահմանել: Այն օրենքով սահմանելը նպատակահարմար չէ նաև այն պատճառով, որ հնգամյա ծրագրով սոցիալական ոլորտին առնչվող հանձնառություններն իրականացվում են՝ ըստ պլանավորածի:

Հարկ ենք համարում նշել նաև, որ նախագծով առաջարկվող երկու կետերն արդեն իսկ ամրագրված են ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի N 1902-Լ որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների» ծրագրի 19-րդ կետով՝ համաձայն որի նախատեսվում է մինչև 2026 թվականը նվազագույն կենսաթոշակի և կենսաթոշակի միջին չափերը համապատասխանաբար հավասարեցնել պարենային և սպառողական զամբյուղների արժեքներին:

Հավելենք, որ նվազագույն կենսաթոշակի չափը դեռևս 2023 թվականի հուլիսի 1-ից արդեն իսկ անցել է Համաշխարհային բանկի կողմից ընդունված մեթոդաբանությամբ հաշվարկված պարենային զամբյուղի արժեքից:

Միջին աշխատանքային կենսաթոշակի չափի բարձրացման վերաբերյալ տեղեկացնում ենք, որ 2025 թվականի կենսաթոշակի բարձրացում չի նախատեսվել, սակայն շարունակվելու է 2022 թվականից մեկնարկած անկանխիկ եղանակով վճարումներից կենսաթոշակատուներին հետվճարի տրամադրումը, որի առավելագույն չափն ամսական 10%-ի և 5,000 դրամի փոխարեն 2024 թվականի սեպտեմբերի 1-ից սահմանվել է, համապատասխանաբար, 12% և 6,000 դրամ: Տեղեկացնում ենք, որ 2025 թվականի հունվարին իրականացված անկանխիկ գործարքների գծով հետվճարի միջին չափը կազմել է 3,853 դրամ:

Ինչ վերաբերում է մինչև 2026 թվականի նվազագույն կենսաթոշակի և միջին աշխատանքային կենսաթոշակի չափերը համապատասխանաբար պարենային և սպառողական զամբյուղի արժեքներին հավասարեցնելու վերաբերյալ օրենքում ամրագրում կատարելու առաջարկին՝ հայտնում ենք, որ նշված զամբյուղների ձևավորման վրա առկա են բազմաթիվ և փոփոխական ազդեցություն ունեցող գործոններ՝ կախված նաև երկրի սոցիալ տնտեսական վիճակից: Հետևաբար՝ օրենքում նման դրույթի ամրագրումը բյուջեների կատարման տեսանկյունից արդեն իսկ ներկայացված հիմնավորումներով ընդունելի չէ: Այդուհանդերձ, Կառավարությունը յուրաքանչյուր տարի դիտարկում է կենսաթոշակների բարձրացման հարցը՝ հարկաբյուջետային հնարավորություններից ելնելով:

Առանձին քննարկման է արժանի միջին ամսական կենսաթոշակի չափի համար օրենքով շեմ սահմանելու նպատակահարմարության հարցը: Այս դեպքում հարկ է նկատի ունենալ, որ այս ցուցանիշը վիճակագրական է, որի ձևավորման վրա որոշիչ են ոչ միայն Կառավարության սահմանած՝ հիմնական կենսաթոշակի չափը և աշխատանքային ստաժի 1 տարվա արժեքը, այլ նաև աշխատանքային ստաժի միջին տևողությունը: Կառավարությունը կարող է մեծացնել իր կողմից սահմանվող ցուցանիշների արժեքները, բայց միջին աշխատանքային ստաժի տևողության կրճատման դեպքում միջին ամսական կենսաթոշակի չափի նվազումն անխուսափելի է: Հնարավոր է նաև հակառակը՝ Կառավարությունը կարող է նվազեցնել իր կողմից սահմանվող ցուցանիշների արժեքները, բայց միջին աշխատանքային ստաժի տևողության ավելացման հաշվին կմեծանա միջին ամսական կենսաթոշակի չափը: Այս տեսանկյունից միջին ամսական կենսաթոշակի չափը կարող է հանդիսանալ որոշակի իրավիճակի ցուցիչ, գործողությունների թիրախ, բայց ոչ օրենքով տրվող երաշխիք:

Բացի վերը նշվածից, տեղեկացնում ենք նաև, որ նախագծի հիմնավորման մեջ ներկայացված պարենային և սպառողական զամբյուղի հաշվարկման հիմքում ընկած Առողջապահության նախարարության կողմից մշակված սննդամթերքի կազմի, կառուցվածքի և էներգետիկայի վերաբերյալ նորմատիվները բավականին հնացած են և ըստ այդմ կարիք ունեն արդիականացման, որի պարագայում, ակնհայտ է, փոփոխությունների կենթարկվեն նաև դրանց արժեքային մեծությունների վերաբերյալ Վիճակագրական կոմիտեի կողմից հաշվարկվող և հրապարակվող համապատասխան տվյալները:

Միաժամանակ առկա չեն գնահատականներ արդյոք սննդամթերքի ներկայացվող կազմը հնարավոր է լիարժեքորեն ապահովել ներքին շուկայում՝ դրանց ներմուծման կամ ներքին արտադրության ներկայիս ծավալների և գների պայմաններում, և դրանց անհրաժեշտ ծավալներն ապահովելն ինչ ազդեցություն կունենա սննդամթերքի շուկայի և այս կամ այն ապրանքի գնի վրա:

Ելնելով վերոգրյալից՝ «Պետական կենսաթոշակների մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի փաթեթի ընդունումը նպատակահարմար չէ և առաջարկվում է այն հանել շրջանառությունից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության 2010 թվականի դեկտեմբերի 22-ի ՀՕ-243-Ն օրենքը (այսուհետ՝ Օրենք) 55-րդ հոդվածը 15-րդ մասից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր մասերով.

«16. Սկսած 2026 թվականի հունվարի 1-ից.

- 1) Նվազագույն կենսաթոշակի չափը չի կարող պակաս լինել պարենային զամբյուղի ամսական արժեքից,
- 2) Միջին աշխատանքային կենսաթոշակի չափը չի կարող պակաս լինել սպառողական զամբյուղի ամսական արժեքից:

17. Սույն հոդվածի 15-րդ մասի կիրառման նպատակով որպես պարենային և սպառողական զամբյուղների արժեքներ, հիմք են ընդունվում տվյալ բյուջետային տարվան նախորդող տարվա երկրորդ եռամսյակի միջին ընթացիկ գներով հաշվարկված՝ Ազգային վիճակագրական կոմիտեի կողմից հրապարակված պարենային և սպառողական զամբյուղների ամսական արժեքները:

Պարենային զամբյուղում ներառվող սննդամթերքի կազմը, կառուցվածքը և էներգետիկան, պարենային և սպառողական զամբյուղների ամսական արժեքները միջին աշխատանքային կենսաթոշակի չափը հաշվարկելու կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը սույն օրենքի կիրարկումն ապահովող իրավական ակտերն ընդունում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո 2 ամսվա ընթացքում:

Հիմնավորում

«ՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը.

Ներկայացվող նախագծերի նպատակը կենսաթոշակառուների և տարեց բնակչության սոցիալական պաշտպանվածության մակարդակի շարունակական բարելավումն է:

2. Առկա իրավիճակը և խնդիրները.

«Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով սահմանվում է Պետական կենսաթոշակային քաղաքականության սկզբունքները, ինչպես նաև աշխատանքային և զինվորական կենսաթոշակների չափը հաշվարկելու կարգը:

Մասնավորապես, որպես Պետական կենսաթոշակային քաղաքականության սկզբունք, սահմանված է՝ կենսաապահովման նվազագույն բյուջեի չափի հետ համադրելի պետական կենսաթոշակի նվազագույն չափ ապահովելը:

Օրենքով սահմանվում է նաև նվազագույն կենսաթոշակի հասկացությունը:

Համաձայն օրենքի՝ հաշվարկված աշխատանքային կենսաթոշակի չափը չի կարող պակաս լինել նվազագույն կենսաթոշակի չափից (եթե օրենքով սահմանված կարգով հաշվարկված աշխատանքային կենսաթոշակի չափը պակաս է նվազագույն կենսաթոշակի չափից, ապա կենսաթոշակը վճարվում է նվազագույն չափով):

Նվազագույն կենսաթոշակի չափը սահմանում է Կառավարությունը: ՀՀ կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 30-ի N 1734-Ն որոշմամբ նվազագույն կենսաթոշակի չափը, սկսած 2023 թվականի հուլիսի 1-ից, կազմում է 36000 դրամ:

ՀՀ 2025 թվականի պետական բյուջեի համաձայն՝ միջին աշխատանքային կենսաթոշակի ցուցանիշը կանխատեսվում է 49275 դրամ:

ՀՀ ԱԺ հավանությանն արժանացած՝ Կառավարության ծրագրի «Աշխատանքը և սոցիալական պաշտպանություն» բաժնի համաձայն՝ նախատեսվում է մինչև 2026 թվականը նվազագույն կենսաթոշակի և կենսաթոշակի միջին չափերը հավասարեցնել համապատասխանաբար պարենային և սպառողական զամբյուղների արժեքներին:

Պարենային և սպառողական զամբյուղների արժեքները հրապարակում է Ազգային վիճակագրական կոմիտեն (ԱՎԿ) ընթացիկ տարվա սոցիալ տնտեսական վիճակի վերաբերյալ զեկույցում:

Ըստ «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2024 թվականի հունվար-դեկտեմբերին» զեկույցի, համաձայն Առողջապահության նախարարության կողմից մշակված սննդամթերքի կազմի, կառուցվածքի և էներգետիկայի, 2024 թվականի 4-րդ եռամսյակի միջին ընթացիկ գներով պարենային զամբյուղի արժեքը կազմում է 40978 դրամ, իսկ սպառողական զամբյուղների արժեքը՝ 75811 դրամ:

3. Առաջարկվող լուծումները

Հաշվի առնելով վերը նշվածը՝ առաջարկվում է ընդունել ներկայացված նախագծերը:

Ըստ այդմ, «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքում նախատեսվող փոփոխությամբ առաջարկվում է սահմանել, որ սկսած 2026 թվականի հունվարի 1-ից.

1) Նվազագույն կենսաթոշակի չափը սահմանել առնվազն պարենային զամբյուղի արժեքի չափով,

2) միջին կենսաթոշակի չափը համապատասխանեցնել սպառողական զամբյուղի արժեքին:

Ընդ որում, համապատասխան ցուցանիշները սահմանելու համար առաջարկվում է հիմք ընդունել Առողջապահության նախարարության կողմից մշակված մեթոդաբանությունը:

Համաձայն ՀՀ կառավարության 04.07.2024թ. N 1064-Ն որոշմամբ հաստատված՝ 2025-2027 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի՝ սոցիալական նպաստների և կենսաթոշակների վճարների գծով պետական բյուջեի ծախսերը կկազմեն համապատասխանաբար՝ 1,007.6, 1,085.0 և 1,165.6 մլրդ դրամ, որից կենսաթոշակային ապահովությանն է նախատեսվում ուղղել համապատասխանաբար՝ 547,826.6, 564,591.5 և 596,345.4 մլն դրամ.

ՀՀ 2025 թվականի պետական բյուջեով կենսաթոշակային ապահովությանն է նախատեսվում ուղղել 560,271.5 մլն դրամ, որից.

- 1) Աշխատանքային կենսաթոշակներ՝ 298,601.0 մլն դրամ,
- 2) Սպայական անձնակազմի զին կենսաթոշակներ՝ 46,338.0 մլն դրամ,
- 3) Շարքային զինծառայողների զին կենսաթոշակներ՝ 687.9 մլն դրամ,
- 4) ՀՀ օրենքով նշանակված կենսաթոշակներ՝ 3,992.4 մլն դրամ,
- 5) կուտակային հատկացումներ՝ 210,000.0 մլն դրամ (սոցիալական վճարներ և բյուջեի մասնակցություն).

4. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը

Ներկայացվող Նախագիծն ընդունվելու դեպքում կենսաթոշակային ապահովության բնագավառում վարվող քաղաքականությունը կդառնա էլ ավելի կանխատեսելի՝ ապահովելով տարեց, հաշմանդամություն ունեցող և կերակրողին կորցրած անձանց համեմատաբար բարեկեցիկ կյանքը՝ բարձրացնելով նրանց վճարվող կենսաթոշակի չափերը:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ

N 204 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ)
ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Դավիթ Խաչատրյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Պետական կենսաթոշակների մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը (Խ-1009-13.02.2025-ԱՍ-011/0) ըննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

13.03.2025
ՀԱՄԱԹՎԱՆԵ
ԷԼԵՏՐՈՆԱԿԱՆ
ԱՏՈՒԿՈՒԹՅԱՆ